

Տնտեսագիտական ուսմունքներում արտացոլվում են տա-
րածելի աշխարհընկալման առանձնահատկությունները և
սկզբունքները: Այդ համակարգային մտածողության
ծեղվածքները (տնտեսական) ընտրությունից առաջ և հետո կարող է
կառուցվել փոխառնչում, գիտության տարաբնույթ բնա-
գավառների ինտեգրում, այլ նաեւ համապատասխան տնտեսա-
կան ու տնտեսագիտական բազիսի առկայություն: Թերեւս այս
մեկնակետից կարելի է ընկալել տնտեսագիտական հոսանքների,
ուսմունքների, դպրոցների ձեւավորման ընթացքը և բովանդակա-
յին մոտեցումները: Այս կողմնորոշմամբ ակնհայտ է, որ հասարա-
կական կյանքում շահերի իրացման համար ճշմարտության դուրս-
բերումը միջոց է դիտվում, իսկ գիտության մեջ՝ նպատակ: Այս մեկ-
նակետից՝ իրապես հասարակագիտությունում վիճարկվում է բա-
ցարձակ ճշմարտությունների առկայության հանգամանքը: Թեւեւ
ըստ էության դասական կողմնորոշումներում դրանք այս կամ այն
կերպ առկա են, որի վրա էլ շատ հաճախ կառուցվում է տվյալ գի-
տության «հիմնաշենքը»:

Ընկալումների այս ծիրում է բացատրելի մարժնալիզմի առա-
ջացումը, ինչի ձեւավորմանը տարակարծությամբ և փոխկրակ-
ման սկզբունքով մեկնաբանելի են մոտենում մասնագիտական
աղբյուրներում՝ Ի դեպ՝ ծագումնաբանական տեսանկյունից մար-
ժնալիզմը տերմինի հայերեն համարժեքը սահման(ային) հասկացու-
թյունն է: Այս հասկացությունը մասնագիտական շրջանակներում
սկզբնապես հաճախակի կիրառվում էր օգտակարություն տերմինի
հետ համատեղ: Հետագայում այդ (սահմանային) հասկացու-
թյունը սկզբունքորեն «վերագրվեց» նաեւ արտադրության բնա-
գավառին: Ետահայաց մեկնաբանությամբ, թերեւս ածականը՝
սահմանային, ստանում էր կիրառության առավել լայն ուղեծիր,
քան օգտակարություն՝ գոյականը:

Ընդհանրապես՝ աշխարհընկալման այն տեսանկյունից մար-
ժնալիզմը բնորոշ է չափակցելիությամբ ընկալումը և համադրություն-
ների բանական չափանիշների դուրսբերմամբ մտածողությունը:
Սա առկա է ցանկացած լեզվամտածողության մեջ: Ահա եւ մարժնա-
լիզմի առաջացմամբ առանցքայնորեն կարելի էր վերագրվել իրացման
բնագավառը՝ հաշվարկվում էր լրացուցիչ միավորի սպառմամբ
ստացվող օգտակարության մեծությունը: Սպառողը, քաղաքատն-
տեսության դասական ավանդույթներին ի շարունակություն, դիտ-
վում էր ճշգրիտալ եակ: Այսինքն, առաջնորդվելով անձնական շա-
հի առավելագույն բավարարման սկզբունքով, ապրանքների հա-
մախմբից ընտրում էր այնպիսի, որոնք ապահովում էին առավել-
ագույն օգտակարություն: Այս ընթացքում տեղի էր ունենում չա-
փակցելիության, համադրության գործընթաց: Թեւեւ իրապես մար-
ժնալիզմը վերաբերմունքն ապրանքը ձեռք բերելուց առաջ և հետո են-
թակա է փոփոխության (այստեղ իր դերն է խաղում արտաքին աշ-
խարհի հոգեբանորեն ընկալման («ասիմետրիզմի») գաղափարը:
Ի վերջո մարդը զգացմունքային եակ է՝ և ոչ թե ճշգրիտալ հաշ-
վարկներ կատարող «տնտեսավարող սուբյեկտ», ինչպես ներկա-
յացված է դասական վերացարկումներում: Թեւեւ, ըստ էության,
մասնագիտական հարթությունում (սահմանային) օգտակարու-
թյան «հաշվարկ» կատարվում էր ապրանքը սպառելիս, իսկ (տն-

տեսական) ընտրության գործընթացը «գտնվում էր» ճշգրիտալու-
թյան տիրույթում: Դիցուք հետաքրքրական կարող է լինել այն, որ
հոգեբանական տեսանկյունից տնտեսավարող սուբյեկտի վերա-
բերմունքը (տնտեսական) ընտրությունից առաջ և հետո կարող է
փոփոխվել: Ընտրության գործընթացի վրա կարելի է ազդել ապ-
րանքը գույների տարաբնույթ համադրությամբ, շարժմամբ և բա-
զում այլեւանակներով ներկայացնելիս: Այս համատեքստում
ետահայաց մեկնաբանությամբ հետաքրքրական կարող է լինել Հ.
Սայմոնի այն անդրադարձը, թե Նորդասական տնտեսությամբ, ըստ
էության, ուսումնասիրվում է ոչ թե ընտրության գործընթացը, այլ
դրա արդյունքները:

Մարժնալիզմի ստեղծումը արժեքի հիմքում առանձնացնում էին սահ-
մանային օգտակարության գաղափարը: Ընդհանրապես՝ գործ-
նական մտածողությամբ մասնագետները մեծապես հակված են
ընդունել արժեքի «մարժնալիստական» տեսությունը: Անկախ
ապրանքում ամփոփված աշխատանքային ծախսումների ծավա-
լից, կարելի էր սպառման ընթացքում ստացվող (սահմանա-
յին) սուբյեկտիվ օգտակարության չափը, ըստ որի էլ շուկայում
հաշվարկվում էր ապրանքի («օբյեկտիվ») գինը: Զաղաքատնտե-
սության մեջ միևնույն մարժնալիզմի ի հայտ գալը «նախանշվում էր
ասիմետրիկ վերլուծական կորագիծ»: Այս առումով ինչպես հարկն
է ուշադրության չէր արժանանում սպառման բնագավառը՝ Թեւեւ,
ըստ էության, տնտեսագիտական մտքի հետագա զարգացումնե-
րում «սիմետրիայի» հնարավոր էր հասնել դիցուք առանց սահմա-
նային օգտակարության գաղափարական ներմուծման ու
կարելի էր: Հատկապես, որ գիտության մյուս բնագավառների
ներկայացուցիչների՝ օգտակարություն տերմինին մոտեցումը մի-
անշանակ չէր: Այսինքն՝ քննադատվում էր, որ ապրանքի սպառ-
ման ընթացքում «ի հայտ եկած» զգացողությունների ամբողջա-
կան ծիրը բնորոշվի օգտակարություն տերմինով: Այս տրամաբա-
նությամբ նշվում էր, որ սա աղճատում է իրականության ողջ բազ-
մագանությունը: Տվյալ մեկնակետից ընդհանրացմամբ ժամանա-
կի ընթացքում կարելի էր ստանում ածականը՝ սահմանա-
յին, քան գոյականը՝ օգտակարություն: Հետաքրքրական էր այն,
որ (Էվոլյուցիոն առումով) մարժնալիստական հայացքների
ծեղվածքներում տեղի էր ունենում Գերմանիայի «պատմական» դա-
րոցի էր դասական քաղաքատնտեսության հիմնարար սկզբունք-
ների յուրօրինակ փոխառնչում: Գիտական տեսանկյունից հե-
տաքրքրական կարող էր լինել այն, որ այս երկու ուսմունքներն էլ
համարվում էին տվյալ տնտեսական համակարգերի ներսում կա-
յացած և աշխատող տնտեսագիտական կառույցներ: Ի մասնա-
վորի մկալիայում «ֆետիշացված» ընկալվում էր դասական քաղա-
քատնտեսության ներկայացուցիչների ջատագոված ազատական
հայեցակարգը, եւ մարժնալիստական մոտեցումները ծնվում էին
այս ինտերցիոն ազդեցությունը ի չիք դարձնելու պայմաններում:
Ավստրիայում, Գերմանիայում մարժնալիզմի ձեւավորմամբ տե-
ղի էր ունենում («տրամագծորեն հակառակ») պատմական դպրո-
ցի՝ հիմնարար տրամաբանության հետ փոխառնչում: Ֆրանսիա-
յում, Շվեյցարիայում ազատախոս մտածողությամբ հանդերձ, տն-
տեսական դաշտում նկատվում էին սոցիալական կողմնորոշում-

«ՄԱՐՇԻՆԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿՅՈՒՄ» ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ. ԵՏԱՀԱՅԱԳ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարգարիտա
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության
տեսության
ամբիոնի
դոցենտ,
տնտեսագիտության
թեկնածու



ների արժարձում: Այս պարագայում մարժնալիզմի ձեռնարկումը տեղի էր ունենում տնտեսագիտական այլ առաջնահերթությունների առաջադրման համատեքստում:

Վերոգրյալ երկրներում մարժնալիստական մտածողական համակարգի ձեռնարկումը նպաստող ինտելեկտուալ, աշխարհընկալումային, աշխարհահայացային, փիլիսոփայական, մեկ խոսքով՝ ինստիտուցիոնալ միջավայրերը եւս էապես տարբեր էին: Անգլիայում հատկապես մեծ տարածում ուներ էմպիրիկ փիլիսոփայական մտածողությունը, եւ մեծ համբավ էր վայելում գեղեցկիստական ուղղությունը: Ավստրիայում, Գերմանիայում՝ Լաիքնտրեյի էին (տր)կանստյան փիլիսոփայության սկզբունքները: Ֆրանսիայում, Շվեյցարիայում գերիշխող էր դեկարտյան փիլիսոփայությունը: Այս տարակերպ կարծությունները քիչ ընդհանրություններ էին պարունակում, որ առկազն երեք երկրներում միաժամանակ ի հայտ գար համանման տնտեսագիտական ուղղություն՝ մարժնալիզմը: Տվյալ ենթատեքստում, հաշվի առնելով հեղափոխություն տրեմիի բուն նշանակությունը, կարելի է հարցականի «արժանացնել» մասնագիտական աղբյուրներում այս ուսմունքի առաջացման գնահատումը՝ որպես հեղափոխություն: Ահա այս փոխառնությունների ծիրում մինչեւ այժմ էլ սպառնալիքներ են մարժնալիզմի առաջացման մեկնաբանությունների առնչությամբ գիտական բանավեճերը:

Այսպիսով՝ մարժնալիզմի առաջացման բացատրությունների ցանկում տեղի էր ունենում ըստ ներքին ու արտաքին գործոնների սկզբունքային տարանջատման համակցում: Առաջին տիպին պատկանող գիտնականներն ու մտածողները «երեսույթի» առաջացումը բացատրում էին՝ ելնելով գուտ «ներքին» դրոպապատճառներից: Այն է՝ բացատրությունների, հիմնավորումների շարքը ներկայացնել միայն տնտեսագիտական գործոններով հիմք պարունակմամբ: Շրջանառվեց այն մոտեցումը, որ քաղաքատնտեսության մեջ տեղի էր ունենում հետազոտության օբյեկտի «գտման» եւ մեթոդիկալի փոփոխման գործընթաց, որի արդյունքում ուշադրություն բեռնվեց սահմանային մեծությունների վրա՝ դրանց տրվեց առանցքային (կենտրոնական) նշանակություն: Մեկ այլ պարագայում ուշադրություն էր դարձվում արտաքին՝ ոչ տնտեսագիտական գործոններին:

• Վերոգրյալ համակցությամբ՝ մարժնալիզմի առաջացմամբ նկատելի է քաղաքատնտեսության, մաթեմատիկայի, հոգեբանության բնագավառների միջառարկայական «հատում»: Իհարկէ՝ տնտեսագիտության մեջ նկատվում էր որոշակիորեն աշխարհընկալումային տեսանկյունի եւ «քաղաքատնտեսական շեշտադրությունների» փոփոխություն: Այս Էվոլյուցիան այն աստիճան թռիչքաձեւ էր գնահատվում, որ գիտության անվանափոխության առաջարկ էր ներկայացվում: Թեեւ դասական քաղաքատնտեսության առաջնեկ մասնագետների (խոսքը վերաբերում է Ա. Սմիթին, Դ. Ռիկարդոյին, Թ. Մալթուսին, Ջ.Ս. Միլլին, Կ. Մարքսին) տեսություններում աշխատավարձի, կապիտալի, հողային ռենտայի եւ տնտեսական մի շարք այլ հիմնահարցերի առնչությամբ վերլուծությունները կրում էին որոշակիորեն «մարժնալիզմի» բնորոշ կողմեր: Ակնհայտ է, որ այսօրինակ մտածողության սկզբունքները խորթ չէին դասական ուղղությանը, սակայն մարժնալիզմ տրեմի-նը տրամագծորեն չէր կարող բնութագրել այս դարոցի ներկայացուցիչների քաղաքատնտեսական հայացքները: Այլ իրենից կներկայացներ դասական դարոցի տնտեսագիտական մտածողության տրամաբանության սահմանային եւ ոչ թե առանցքային, կենտրոնական մասնիկ:

• Ներթոֆիզիոլոգիական տեսանկյունից միեւնույն հիմնահարցի վերաբերյալ երկարատեւ ժամանակահատվածում տեղեկատ-

վական «պրեսսինգը» կարող է բերել տրամագծորեն հակադարձ տեսակետի ձեռնարկման: Մինչ այդ տասնամյակներ շարունակ տնտեսագիտական միտքը արտադրության հիմնախնդիրների լուծման լավ կամ վատ «խարխալանքով էր զբաղված»: Իսկ այդ տարիներին տնտեսական տեսանկյունից տնտեսավարող միավորների առջեւ նկատվում էր իրացման հիմնախնդիրների կազմակերպման «ծառագուն»: 1800-70թթ. Անգլիայում բամբակյա գործվածքեղենի թողարկումն ավելացավ 19 անգամ, բամբակի սպառումը՝ ավելի քան 1000, ածխի հանույթը՝ անց 11 անգամ, մետաղամշակման արտադրանքը՝ 28: Շոգեքարշերի հզորությունը՝ անց, 1870թ. դրությամբ, 800 անգամ: Այդ տարիներին Գերմանիայում եւս նկատվում էր տնտեսական վերելք: Միայն 1850-ականներին գերմանական ապրանքների արտահանումն ավելացավ 3, ներմուծումը՝ 2 անգամ: 1850-60թթ. ածխի հանույթը՝ անց 5, թուջի արտադրությունը՝ ավելի քան 7, երկաթուղիների երկարությունը՝ 3, շոգեքարշերի հզորությունը՝ 9 անգամ: 1850-70թթ. բեռնափոխադրումները երկրի ներսում անցին 21 անգամ: Ֆրանսիայում նապոլեոնյան հաղթանակները ձեռնարկում էին տնտեսական վերելքի նախապայմաններ, սակայն Ռուսաստանից պարտությունը, երկրում տիրող քաղաքական անկայունությունը ի չիք դարձրին այդ ձեռքբերումները: Այնուամենայնիվ, 1810-60թթ. արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալն անց 6 անգամ: 1850-70թթ. բամբակի սպառման չափերը կրկնապատկվեցին, եռապատկվեցին թուջի եւ ածխի արտադրության ծավալները, 3.6 անգամ ավելացավ շոգեքարշերի ընդհանուր քանակը: Այսպիսով՝ կարելու էր, գիտական մտքի ձեռքբերումներից գատ, նաեւ հաշվի առնել տնտեսական այն բազիսը, որի հիմքի վրա կառուցվում էր մեծապես «սպառման առնչվող այս տեսությունը»:

• Հետաքրքրական կարող է լինել այն, որ մարժնալիստական տեսության առաջնեկ մասնագետների հետաքրքրությունների շրջանակներում էին ֆիզիկամաթեմատիկական գիտական դիսցիպլինները: Առաջին հայացքից սա պատահականություն էր, սակայն հետագայում այս ոլորտների փոխառնություններն էական էին դառնում: (Այսպես օրինակ՝ ըստ Մյուրրեյ Միլզեյթի, ինքնակարգավորումը («հավասարակշռությունը») տնտեսության (տնտեսական համակարգի) ձգողության կենտրոնն է՝¹⁷): Դիցուք, հաշվի առնելով մարմնի զարգվածի եւ ձգողության ուժի հարաբերակցության ուղղությամբ 1665թ. Նյուտոնյան հայտնագործությունները, հնչում էր տեսակետ, թե այդ բանաձեւերն Էվոլյուցիոն զարգացմամբ արտաձվում էին քաղաքատնտեսությունում: Այսպես, ըստ Նյուտոնի՝ $G \frac{m_a m_b}{r_{ab}^2} = F_{ab}$, որում $G = 6.67 \cdot 10^{-11} \text{H} \cdot \text{m}^2 / \text{kg}^2$ փորձարարական ճանապարհով հաշվարկված (ուսիվերսալ) հաստատուն մեծություն է: F_{ab} - b մասնիկից a մասնիկի վրա ազդող ուժի մեծությունն է, m_a, m_b - համապատասխանաբար՝ a եւ b մարմինների զանգվածն է, r_{ab} - a եւ b մարմինների միջեւ հեռավորությունն է (ի դեպ՝ «մարժնալիստական») տեսանկյունից սա մոտարկվում էր գնորդների եւ ապրանքների միջեւ ընտրություն կատարելու գործընթացին: Հիշեցնենք Նոբելյան մրցանակակիր Հ. Սայմոնի այն պնդումը, որ (տր)դասական տեսությունում քննվում է տնտեսական ընտրության արդյունքները, այլ ոչ թե բուն ընտրության գործընթացը: Նյուտոնյան տեսությունում ձգողության ուժը հավասարաչափ էր ազդում տարբեր մարմինների վրա նրանց հարողովելով հավասար արագացում՝ անկախ մարմնի զանգվածից, քիմիական բաղադրությունից եւ այլ հատկություններից: Սա է իրականությունը.

Գոհար ՂԱԶԱՐՅԱՆ
Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի տիեզերական սարքերի եւ էներգետիկայի լաբորատորիայի գիտաշխատող, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու

Արման ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու



ու սա անսասան անկյունաքար էր Ելնշտեյնյան տեսությունում: Ահա այս տրամաբանությամբ՝ կարծեք թե միատիպ ապրանքները միատեսակ են ազդում բոլոր սպառողների վրա՝ (ուստի ելնշտեյնյան տնտեսավարողների սուբյեկտիվ որոշումների հիման վրա հաստատվում է օբյեկտիվ (շուկայական) գինը): Վերջապես՝ (տոր)դասական տեսությամբ՝ երկարաժամկետ հատվածում (զուտ մրցակցային) պայմաններում շուկայական գինը համարվում է տրված մեծություն, որի հետ հարմարվում են արտադրողները, վաճառողները, սպառողները: Կարծեք թե ենթադրյալ միատեսակ ազդեցություն է բոլոր սպառողների վրա՝ անկախ կարգավիճակից:

Մեկնարկային հավասար պայմանների դեպքում գրավիտացիոն համասեռ (միեկնային) դաշտում 2 մարմինների համար (M1 և M2 զանգվածների և համապատասխանաբար՝ P1, P2 էներգետիկ ներուժի դեպքում վերջինը բանաձևում հապավումն է՝ $P_{\text{նու.ՅՈ.2}} = P_{\text{նու.ՅՈ.1}}$, ճշմարիտ է հետևյալ պնդումը.

$$M_1 \varphi / P_{\text{նու.ՅՈ.1}} = M_2 \varphi / P_{\text{նու.ՅՈ.2}}$$

որում

φ - գրավիտացիոն դաշտի (ֆիզիկական) ներուժն է ($\varphi = -G m_a / r_{ab}$), $P_{\text{նու.ՅՈ.}} = -G m_a m_b / r_{ab}$ կամ $P_{\text{նու.ՅՈ.}} = m \varphi$:

Սա համակցելով տնտեսագիտական վերագրյալ սկզբունքներին, հիմք ընդունելով դասական տեսությունում կիրառելի այն պնդումը, որ ժամանակի երկարատե հատվածում օգտագործվում է արտադրական հնարավորությունների ամբողջ ծավալը (լրիվ զբաղվածության պայմաններում), ակնհայտ է, որ ժամանակի տվյալ տիրույթում ապրանքների քանակությունը կարելի է դիտարկել տրված մեծություն: Տրամաբանության այս կերպի հենքում դիտարկված վերջին բանաձևը պարունակում է տնտեսագիտության մեջ լայնորեն կիրառելի $M_1 U / P_1 = M_2 U / P_2$ «արտածման» հետ որոշակի աղերսներ: Այս դեպքում էլ ապրանքների գներն են շուկայում հաստատված ըստ իրենց օգտակարության չափի, և սա է անփոփոխ ժամանակի տվյալ հատվածում:

Իհարկե՝ քաղաքատնտեսության մեջ նոր տոնայություններ նկատելի էին, սակայն քաղաքատնտեսության զարգացման տվյալ շրջանը դժվար կլինեք կոչել «կյուտոնյան»: Ֆիլիպ Միրոսկին այս համատեքստում «մարդկային ստանդարտի հեղափոխությունը» որակում է «մարդկային ստանդարտի անբարձր»¹⁹: Ենթադրյալ «քանակումը» իրականացված էր ֆիզիկամաթեմատիկական քննադատին առնչվող արժեքների հետ «սերտամամբ»: Սակայն, մեր խորին համոզմամբ, ըստ էության՝ իրապես նկատելի էր համակցում և ոչ բնակցում, ու այս համակցումը ենթադրում էր գիտության առավել լայն քննադատների հետ փոխառնում, քան միայն հողվածագրի նշած ֆիզիկայից/կամ մաթեմատիկայի հետ առնչությունն է:

Թերեւս ցայսմ էլ տնտեսագիտության մեջ այս ուղղության առաջացման որեւէ միագործոն բացատրություն չի կարելի համարել լիարժեք: Ինչպես նաեւ այս ամենով հանդերձ՝ մարդկային իրապես առաջացման որեւէ միագործոն բացատրություն և միակերպ մեկնաբանության ֆետիշացումը կարելի է դիտել իրականության «աղճատում»: Զանգի տնտեսագիտական մտքի այս («մարդկային») թռիչքը ենթադրում է առավել համապարփակ համակցում, որում ամեն մի գործոն, գիտության վերագրյալում նշված ամեն մի բնագավառ ունի կարեւոր և կառուցողական ուրույն նշանակություն:

1. Марк Блауг, Экономическая мысль в ретроспективе, Пер. с англ., 4-е изд., М. 1994, 720 с.; Маржиналистическая революция. Возникновение предельной полезности: абсолютистская или релятивистская интерпретация? с. 275-288; История экономических учений, Учеб. пособие, Под ред. В. Автономова, О. Ананьина, Н. Макашевой, М. 2003, Раздел II: Начало истории современной экономической мысли: Маржинализм, с. 175-213; Современные теории развития мировой экономики, Т. Манасерян, Ереван 2005, Теория предельной полезности, с. 101-116; The age of the economist, Daniel R. Fusfeld, 9 edition, 2002, Neoclassical economics, pp. 85-98; Սարիլյան Ռ.Ն., Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Երեւան 2004, էջ 88-108, Կիրակոսյան ր., Թավադյան Մ., Գրիգորյան Ս., Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Ուսումնական ձեռնարկ (տ. գ. դ., պրոֆ. Գր. Ե. Կիրակոսյանի խմբ.), Երեւան 2004, Գլուխ XII, Սահմանային տեսությունները և նոր դասական ուղղության ծագումը, էջ 237-269 2. Այս համատեքստում մարդու էության հոգեբանորեն ընկալման

մանրամասներ տես՝ Р.М. Нагдян, Принцип симметрии в психологии, Ереван 2005; А.Н. Леонтьев, Биологическое и социальное в психике человека, Москва 1981; Альфред Адлер, Индивидуальная психология как путь познанию и самопознанию человека, Киев 1997; Э. Титченер, Два уровня сознания, Хрестоматия по вниманию, Под ред. Леонтьева А.Н., Пузырева А.А. и Романова В.Я., М.: Изд-во МГУ, 1976; http://www.psychology.ru/library/00056.shtml, Гунпенрейтер Ю.Б., Неосознаваемые процессы, Введение в общую психологию, М.: Изд-во МГУ, 1988, с. 65-67, 72-75, 76-77, 87-89, 90-93. 3. Саймон Г., Рациональность как процесс и продукт мышления, THESIS Вып. 3, 1993, с. 18. 4. Թեյլ Ժ.Ք. Սելը «ֆրանսիական ազատամտությամբ» քաղաքատնտեսությունը դիտում էր գիտություն, որում ուսումնասիրությունները, որպես կանոն, պետք է կատարվեն՝ արտադրություն, փոխանակություն, բաշխում, վերաբաշխում, սպառում տրամաբանական հաջորդափոխությամբ: Տես՝ http://ek-lit.narod.ru/saysod.htm, Жан-Батист Сэу, Трактат по политической экономии. Թերեւս իրապես սպառման քննադատին հատկացված ուշադրությունը խորացման կարիք ուներ: Տես՝ http://ek-lit.narod.ru/say005.htm, Жан-Батист Сэу, Трактат по политической экономии, >VIII, Частное потребление; http://ek-lit.narod.ru/say009.htm, Жан-Батист Сэу, Трактат по политической экономии, >IX. Потребление общественное. Կարծում եմ, որ տնտեսագիտական հարթությունում արտադրության և իրացման քննադատների համատեղ ուսումնասիրման անհամաչափությունը առաջին անգամ համապարփակ բացատրված է Ա. Մարշալի աշխատությունում, ինչը կարող է ուսուցողական լինել նաեւ ներկայում. Альфред Маршалл, Основы экономической науки (предисл. Д.ж.М. Кейнса, пер. с англ. В.И. Бомкина, В.Т. Рыкина, Р.И. Столпера), М.: ЭКСМО, 2007, 832 с. (Антология экономической мысли). 5. Մարտիրոսյան Ա.Ռ., Տնտեսագիտական մտքի պատմություն, ուսումնառության կյուբեր (խմբագիր Գ. Ա. Թորթալից անդամ, տ. գ. դ., պրոֆեսոր Գր. Ա. Դարիբյան), Երեւան 2005, էջ 245 6. Е.М. Майбурд, Введение в историю экономической мысли. От пророков до профессоров, 2-е изд., испр. и доп., М.: 2000, 560 с., с. 328-334, 336-338. 7. Տես՝ նույն տեղում, էջ 339-340 8. Адам Смит, Исследование о природе и причинах богатства народов, Книга 1, Глава X, О заработной плате и прибыли при различных применениях труда и капитала, http://ek-lit.narod.ru/smit011.htm. 9. Рикардо Д., Начало политической экономии и налогового обложения. Избранное, Пер. с англ., предисл. П.Н. Ключкина, М. 2007, 960 с. (Антология экономической мысли), с. 639-665. 10. Thomas Malthus, An Essay on the Principle of Population, http://socserv2.socsci.mcmaster.ca/~econ/ugcm/3ll3/malthus/popu.txt 11. Д.жон Милль, Принципы политической экономии и некоторые их приложения к социальной философии, О международной стоимости, 3. Влияние издержек перевозки товаров на их стоимость в международной торговле, 8. О незначительном влиянии данного дополнительного элемента на практический результат, http://economics.ru/cgi-ise/gallery/frame_rightn.pl?type=in&links=:/in/mill/lectures/mill_13.txt&img=lectures_small.jpg&name=mill 12. Կ. Մարքս, Կապիտալ, հատոր 1, Երեւան 1933, էջ 182, 598-600 13. Մանրամասն տես՝ физиология, А.А. Маркосян, с. 373 (6-ое издание, перераб. Главным управлением учебных заведений Министерства здравоохранения СССР, допущен в качестве учебника для учащихся медицинских училищ); Н.Н. Данилова, Психофизиология, Учебник для вузов, Москва 2001, 373 с., с. 33-43, 59-68, 193-196, 270-285, 289-295, 319-324. 14. Անանյան Լ.Ը., Պետրոսյան Լ.Պ., Տնտեսական պատմություն, Ուսումնական ձեռնարկ (տ. գ. դ. պրոֆ. Լ.Ը. Անանյանի խմբ. և ղեկ.) Եր., Տնտեսագետ, 2005, 294 էջ, էջ 96-97 15. Տես՝ նույն տեղում, էջ 111 16. Տես՝ նույն տեղում, էջ 103-104 17. Экономическая теория, Под ред. Д.ж. Иммуэма, М. Милгејта, П. Ньюмена, Пер. с англ., науч. ред. чл.-корр. РАН В.С. Автономова, Равновесие: развитие концепции, Мюппеу Милгејт, Москва 2004, с. 285. 18. Վերիլիչենը, որ մարքայան տեսության կողմնակիցներն ի քննադատություն մարդկային ստանդարտի մեջբերում էին այն փաստարկը, թե «մարդկային զուգում» քննվում է անդասակարգ սպառողի գաղափարը: Իսկ մարքայան տեսությունում դասակարգային պատկանելությունը թելադրում էր տնտեսական վարքագծի կրթությունը: 19. Philip Mirowski, Physics and the "Marginalist Revolution" in Against Mechanism, Cambridge Journal of Economics, 1984, pp. 11-31.